08.03.2017թ.

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի շնորհավորանք-ուղերձը Կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի առթիվ

Գրկին գարուն է Հայոց աշխարհում, ու բնության զարթոնքը մեկնարկում է բոլորիս համար սիրելի ու սպասված տոնի՝ Մարտի 8-ի ազդարարմամբ: Տոնը ոչ միայն շնորհավորանքների և բարեմաղթանքների լավագույն հնարավորություն է, այլ նաև մեր զգացմունքները բարձրաձայնելու, ևս մեկ անգամ կարևորելու և արժևորելու կանանց տեղն ու դերը մեր հասարակության մեջ:

Սիրելի կանայք, մայրեր, քույրեր և աղջիկներ

Անհերքելի է ձեր դերակատարումը բոլոր ժամանակներում, անուրանալի է ձեր ավանդը մեր հաղթանակների, մեր պետության կայացման գործում: Դուք կանգնած եք նաև լավագույն գաղափարների, մեր ձեռքբերումների արմատներում:

Ձեր աշխատավայրերում, հասարակական գործունեության մեջ նոր մտահղացումների, նախաձեռնությունների հեղինակներ եք: Մեր կողքին ապրում և արարում են մասնագիտական և աշխատանքային մեծ փորձառություն ունեցող կանայք, օրինակելի մայրեր, ազատամարտիկների կանայք, որոնցով պետք է հպարտանալ՝ արժևորելով ձեր աշխատանքն ու ներկայությունը, ձեր կենսասիրությունն ու ներկայությունը:

Սիրելի' կանայք և աղջիկներ

Ձեր հոգածությունն ու զգայուն մոտեցումներն ամենուր են, համայնքային կյանքի բոլոր ոլորտներում, որոնց դրական արձագանքը մենք տեսնում ու լսում ենք ամեն օր:

Սակայն ամենից առաջ ձեզանից շատերը ընտանիքի հոգատար ու սիրագորով մայրեր են, ովքեր մեր երկրի մանկան կրթողն ու դաստիարակողն են, վաղվա քաղաքացու դիմագիծ ձևավորողը: Ցանկանում եմ առանձնակի շնորհավորել Հայոց բանակում իրենց պարտքը կատարող զինվորների մայրերին: Թող ձեր աչքերը միշտ փայլեն երջանկությունից, ապրեք անխռով և հպարտ՝ ձեր զավակների հաջողությունների և բարի լուրերի սպասմամբ:

Հարգարժան մայրեր ու կանայք, աղջիկներ և քույրեր

Հրաշալի տոնի՝ Մարտի 8-ի առթիվ ընդունեք իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենաջերմ բարեմաղթանքներն ու շնորհավորանքները:

Թող ձեր կյանքի ամեն մի օրը հագեցած լինի անձնական և աշխատանքային հաջողություններով, բարձր տրամադրությամբ և դրական զգացողություններով:

Ցանկանում եմ ձեզ սեր և երջանկություն, խաղաղություն և բարեկեցիկ կյանք, երբեք չկորցնեք ձեր հոգու և մտքի լույսը: Միշտ մնացեք սիրված ու սիրելի՝ շրջապատված ջերմությամբ, հոգատարությամբ և հարազատ մարդկանցով: Գարունը լույս է, արև, ջերմություն, տրամադրություն, ապագայի շունչ: Կրեք այդ ամենը ձեր մեջ՝ այն փոխանցելով ձեր ընտանիքներին և շրջապատին: